

**ԿՐՈՆԱԿԱՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ
ԿՐՈՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ
(19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՁ - 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)**

Մանե Ղևոնդյան

Կրթական համակարգում կրոնական կրթությունն ու դաստիարակությունն ունեն իրենց ուրույն դերն ու նշանակությունը: Դրանց հիմնահարցերով այսօր զբաղվում է գիտության երիտասարդ ճյուղ համարվող կրոնական մանկավարժությունը: Այն առաջացել է երկու առանձին գիտությունների՝ աստվածաբանության և մանկավարժության համագործակցության արդյունքում: Համաձայն Միխայիլ Դոմագենի կրոնական կրթության խնդիրները հանրակրթության համատեքստում հետազոտելու համար, անհրաժեշտ է դրանք համարժեքորեն քննել և՛ մանկավարժության, և՛ աստվածաբանության սահմաններում՝ չհամարելով ոչ մի ուղղություն մյուսից առավել²:

Քննարկվող հարցի առնչությամբ օտար լեզվով գոյություն ունի մեծածավալ կրոնական և մանկավարժական գրականություն³ և գիտահետազոտական ուսումնասիրություններ, սակայն նույնը չենք կարող ասել հայկական միջավայրի մասին, ինչի հետևաքննվ առաջ են եկել բազմաշերտ ուսումնասիրության կարիք ունեցող խնդիրներ: Այն մասին, թե ինչպիսի կրոնական կրթության և դաստիարակության ավանդույթ ենք

¹ Տվյալ հոդվածում կրոնական կրթություն և դաստիարակություն ասելով նկատի ենք ունեցել քրիստոնեական կրթությունն ու դաստիարակությունը:

² Տե՛ս **Դոմագեն Մ.**, Կրոնական մանկավարժություն, Հայ-գերմանական ուսումնական ձեռնարկ աստվածաբանության ֆակուլտետների համար, հտ Ա, Երևան-Հալլե-Վիտենբերգ, 2017, էջ 174:

³ **C. Grethlein**, An introduction to practical theology: History, Theory and the Communication of the Gospel in the present, 2016: M.Domsgen, The dimensions of learning in Religious Education: M. Rothgangel, T. Schlag, F. Schweitzer (Hg), Basics of Religious Education, Gutersloh 2014: Козырев Ф. Н., Гуманитарное религиозное образование, Россия, 2010: Козырев Ф. Н., Религия в школьном образовании: Обзор современной ситуации, тенденций и инноваций, Москва, 2019.

ունեցել մեզանում, պատմական և մանկավարժական ինչպիսի առանձնահատկություններ են ունեցել տվյալ կրթությունն ու դաստիարակությունը, արդյոք ընդհանուր մանկավարժության առաջադրանքներն են լուծել, թե միջոց են եղել դրանք լուծելու համար, հնարավոր է պատկերացում կազմել սույն խնդիրները հետազոտելու արդյունքում:

Հարկ է նշել, որ հայ մանկավարժության պատմությանն առնչվող աշխատությունների շատ հեղինակներ, իրենց մենագրություններում մասնակիորեն անդրադարձել են կրոնական կամ բարոյական կրթությանն ու դաստիարակությանը¹: Վերջիններս չեն տարանջատել այդ երկուսը, այլ ներկայացրել են միասին:

Մեր աշխատանքում արժեքավոր աղբյուրներ են հանդիսացել հայ պարբերականները, որոնք բացառիկ նշանակության տեղեկություններ են հաղորդում քննարկվող հարցի առնչությամբ:

Սույն հոդվածում մեր նպատակն է մանկավարժական և կրոնական պարբերականների հիման վրա ներկայացնել հայկական դպրոցական համակարգում կրոնական կրթության և դաստիարակության նպատակները, դասավանդման եղանակներն ու որոշ չափով կիրառվող դասագրքերը: Տվյալ աշխատանքում անդրադարձել ենք 19-րդ դարի 80-90-ական թթ. ի և 20-րդ դարի առաջին կեսի կրոնամանկավարժական ամսագրերում կրոնական կրթության և դաստիարակության հայկական փորձի առնչությամբ ուսումնասիրություններին:

Մանկավարժական ամսագրերում տվյալ ուսումնասիրությունների հրապարակումը սկսվել է դեռևս այդ ամսագրերի սկզբնավորման ժամանակներից սկսած՝ 19-րդ դարի 70-ական թթ.², իսկ կրոնական ամսագրերի էջերում նման գրվածքներ հայտնվել են 19-րդ դարի 80-90-

¹ Տե՛ս **Պէրպլերեան Ռ.**, Դպրոց և Դպրութիւն, Վիեննա, 1907: Հացունի Վ., Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923: Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ դպրոցի, հտ. Ա, Գահիրէ, 1946: Սանթրոսյան Մ. Հ., Արևելահայ դպրոցը XIX դարի I կեսին, Երևան, 1964: Նազիկյան Գ. Ա., Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969: Խուրդյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ, Երևան, 1987: Ոսկանյան Շ., Ուրվագծեր արևմտահայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն: (1850-1920 թթ), հտ. Ա, Երևան, 2009:

² Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, հտ. Ա: Խմբագրական կոլեգիա՝ Խառատյան Ա., Գևորգյան Լ. Մ., Մխիթարյան Մ. Հ.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Գահիրէ, 2006, էջ 594:

ական թթ., ապա 20-րդ դարի առաջին կեսին: Ժամանակաշրջանի և ամսագրերի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝ ա) հայ կրոնամանկավարժական պարբերականներում կրոնական կրթության և դաստիարակության շուրջ առաջին գրվածքները ի հայտ են գալիս 19-րդ դարի 70-ական թթ. ից սկսած, բ) հայ մանկավարժական և կրոնական մամուլը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել կրթության և դաստիարակության հիմնահարցերը, որոնց շրջանակում լուսաբանել է քննարկվող հարցի առնչությամբ բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ:

Հայ պարբերականների էջերում լուսաբանվել են հայ դպրոցների կրթական գործի կազմակերպման, դեռահասների՝ բարոյական, ֆիզիկական, կրոնական, գեղագիտական դաստիարակության հարցեր, դասավանդման և ուսումնական ծրագրերի մշակման մեթոդաբանական սկզբունքներ, դասագրքերի վերանայման խնդիրներ:

Հատկանշական է, որ մանկավարժական¹, կրոնական², հասարակական-քաղաքական³, մանկական⁴ ամսագրերում հրատարակվել են հոդվածներ և ուսումնասիրություններ կրոնի՝ դպրոցական առարկայի առնչությամբ: Այդ գրվածքներն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում 19-րդ դարի 70-80-ական և 20-րդ դարի առաջին կեսի ընթացքում, դրպրոցական համակարգում կրոնի դասավանդման հիմնահարցերի վերաբերյալ: Դրանց շնորհիվ տեղեկանում ենք ընդհանուր առարկայացանկում կրոնի դերի կարևորության, օրակարգում եղած առարկայի նպատակների ու խնդիրների, դասավանդման ձևերի, օգտագործվող դասագրքերի մասին: Հետաքրքրական է առարկայի խնդիրների վերաբե-

¹ «Մանկավարժանոց» մանկավարժական հանդես, Թիֆլիս, 1884-1886: «Մանկավարժական թերթ» ամսագիր, Թիֆլիս, 1878-1879: «Հայկական աշխարհ» Թիֆլիս, Գանձակ, Շուշի, Բաքու, Երևան, 1865-1871, 1874-1879: «Վարժարան» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1882-1884: «Դպրոց» մանկավարժական ամսագիր, Վաղարշապատ, 1874-1876: «Հայ Դպրոց» հրատարակություն հայ ուսուցչական միության, Ալեքսանդրիա, 1933-1935, 1938:

² «Արարատ» հանդես, Ս. Էջմիածին, 1868-1919: «Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, 1866-1877, 1927-2008, 2012-2019:

³ «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, Թիֆլիս, 1889-1907: «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիր, Թիֆլիս, 1860-1863:

⁴ «Աղբյուր» միամսյա պատկերազարդ հրատարակություն երեխաների և դաստիարակների համար, Թիֆլիս, 1883-1918:

րյալ Խորեն Ստեփանեի հետևյալ նշումը.

«Կրօնի դասատուութեան մէջ գլխատրագոյն և կարևորագոյն խնդիրն այն է, որ մանուկներն աստիճանաբար սովորելով կրօնական ճշմարտութիւնները, հետզհետէ ընդարձակվէր նոցա մտատրական կրօնական տեսակէտը, և հետզհետէ կրթվէր նոցա բարոյական զգացումն,- մի խօսքով որ մանուկները զարգանային և հզորանային հոգևոր կեանքի մէջ»¹:

Այն մասին թե ինչպիսի դասավանդման ձևեր են կիրառելի եղել, տեղեկանում ենք տարբեր հեղինակներից: Հետաքրքրական է Գրիգորիս Երզնկյանցի մեջբերումը վերոնշյալի վերաբերյալ.

«...ներկայումս կրօնագիտութեան դասաւանդման մէջ երկու եղանակներ են յառաջացել՝ առաջինն է միասնական եղանակն, իսկ երկրորդն համակենտրոնականն: Դրքա զարգացել են այն հետևանքից, սրբազան պատմութիւնն իբրև հիմք ընդունելով, որ կրօնագիտութեան բոլոր մասերի մէջ պէտք է միութիւն լինի»²:

Քննարկվող ամսագրերում առանձնակի ուշադրության է արժանի կրօնի դասագրքերի հարցը: Հոդվածներից պարզ է դառնում, որ կիրառելի են եղել Մսեր Մագիստրոսի, Ալամդարյան վարդապետի, Օրբելի և Սահառունի ավագ քահանաների, Ստեփանոս ավագ քահանա Տեր-Ստեփանյանի հեղինակած դասագրքերը³: Հոդվածների հեղինակները համակարծիք են, որ այդ դասագրքերը հաջող չեն և կարիք ունեն բարելավման: Այդ առնչությամբ Գ. Մուրատյանցը հիշատակում է.

«Անյարմար են դասագրքերը, որովհետև չկայ նրանց մէջ այն սկզբունքը, որ աշակերտին մտածել և զգալ սովորեցնի, հայկական չէ նրանց եղանակը, որովհետև նմանութիւն են բոլորովին օտար և արդէն հերքուած ուղղութեան»⁴:

¹ Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կտակարանի պատմաձևերի համակերթօնացումն, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 9-10, էջ 313-314:

² Տե՛ս **Երզնկեանց Գ.**, Դասաւանդման խորհուրդներ, «Արարատ» հանդես, Սբ. Էջմիածին, 1892, N Է, էջ 644:

³ Տե՛ս **Մուրատեանց Գ.**, Խորհրդածութիւն թէ ինչքա՞ն հարկատր է քրիստոնէութեան վարդապետութիւնը և բարոյականը դաստիարակութեան մէջ. թէ՞ ինչ եղանակաւ և ի՞նչ տեսրակների վերայ է ասանդվում մարդկային կենաց այս կարետր ուսմունքը մեր դպրոցներումը, և թէ ի՞նչպէս պետք է ասանդուէր, «Կռունկ Հայոց Աշխարհի», հանդէս ամսօրեայ, Թիֆլիս, 1860-1863, էջ 772-773: Տե՛ս Բահաթեանց Ա., Սկզբունք Քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ, «Մանկավարժական թերթ», ամսագիր, Թիֆլիս, 1878, N 2, էջ 34:

⁴ Տե՛ս **Մուրատեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 784:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ այս աշխատանքում ներկայացված հոդվածների և ուսումնասիրությունների ճնշող մեծամասնությունը արևելյան մամուլում վերնագրված է «կրոնի ուսուցում», «կրոնագիտություն», «կրոնական դաստիարակություն» խորագրերով, սակայն բովանդակությունը բացառապես վերաբերում է քրիստոնեական դաստիարակությանը, քրիստոնեական կրոնի դասավանդման կարևորությանն ու առանձնահատկություններին:

«Քրիստոնեական դաստիարակություն», «քրիստոնեական ուսում», «քրիստոնեական կրթություն» խորագրերով հոդվածներ առկա են Մխիթարյանների պարբերական հրատարակություններից՝ «Բազմավեպ»-ում¹ և Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնական ամսագրի՝ «Սիոն»-ի էջերում²: Դրանցում լուսաբանվել են մեծամասամբ տեսական բնույթի հոդվածներ, ի տարբերություն արևելյան մամուլի, որի սահմաններում հեղինակները հրապարակել են և՛ տեսական, և՛ գործնական առանձնահատկություններով ուսումնասիրություններ:

Գրեթե բոլոր ամսագրերում աշխարհիկ և հոգևոր ոլորտի ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ հարցերը՝ ա) առարկայի նպատակներ ու խնդիրներ, բ) դասավանդման մեթոդաբանություն, գ) ուսումնական ծրագրերի բովանդակային առանձնահատկություններ, դ) դասագրքերի վերանայման հարցեր:

Հոդվածների հեղինակները փաստում են, որ դպրոցներում կրոնի դասերը ոչ պատշաճ վիճակում են և անտարբերության են մատնված³: Գլխավոր պատճառներից են եղել՝ դասավանդող ուսուցիչների մանակավարժական անպատրաստվածությունը, դասավանդման ոչ ճիշտ մեթոդաբանության ընտրությունը⁴, դասագրքերի նյութերի անհամապատաս-

¹ Տե՛ս **Թոմաճեան Հ. Թ.**, Քրիստոնեական դաստիարակութիւնը արդիական ըմբռնումներու հանդէպ, «Բազմավեպ» բանասիրական-գրական-գիտական-բարոյական հանդէս, Վենետիկ, 1933, N 2, էջ 71-75: Հոդվածի շարունակությունը տե՛ս՝ 1933, N 4, էջ 158-162, 1933, N 6, էջ 267-271, 1933, N 7-8, էջ 300-305: 1933, N 11-12, էջ 530-534:

² Ժողովրդային կրթութիւն Գ Քրիստոնէութիւնն իբրև դաստիարակիչ, «Սիոն» ամսագիր, 1868, N 11, էջ 245-250: Հոդվածի շարունակությունը տե՛ս 1869, N 3, էջ 49-57:

³ Տե՛ս **Կոստանեան Կ.**, Կրօնի ուսուցչութիւն, «Վարժարան», Թիֆլիս, 1882, N 2, էջ 52: Կրօնագիտութիւն ազգային դպրոցներում, «Դպրոց», Վաղարշապատ, 1875, N 3, էջ 86:

⁴ Տե՛ս **Կոստանդեան Կ.**, նշվ. աշխ., էջ 52-53: Մուրատեանց Գ., Խորհրդածութիւն թէ ինչքան հարկատու է քրիստոնէութեան վարդապետութիւնը և բարոյականը դաստիա-

խանությունը մանկավարժական պահանջներին¹, պաշտոնյաների անտարբերությունը կրոնական դաստիարակության հարցերում²: Դաստիարակության գործին նվիրված անձանց անուշադրության մասին են վկայում հետևյալ տողերը. «... բուն կրոնական կեանքը կրնայ մտահոգիչ կացութեան մը վերածուիլ մեր մէջ հետզհետէ գլխաւորապէս այն պատճառաւ որ նոր սերունդին դաստիարակութեան գործին մէջ, դպրոցներէն ներս կամ դուրս, կրոնական կրթութեան չէ ընծայուած ուշադրութիւնն ու խնամքը, բան մը՝ որուն ամենէն աւելի մտադիր պէտք է լինին անոնք որ կոչոււմ և պաշտօն ունին վարելու դաստիարակութեան գործը և հսկելու ազգին բարոյական կեանքին վրայ»³:

Ներկայացվող հոդվածներում առարկայի խնդիրներն ու նպատակները կրկնվում են: Ամբողջացնելով դրանք, կարող ենք ասել, որ քննարկվող ժամանակաշրջանում կրոնի՝ դպրոցական առարկայի նպատակներն են եղել՝ ա) աշակերտների մեջ ձևավորել և զարգացնել կրոնական լայնախոհ միտք, բ) աշակերտներին աստիճանաբար սովորեցնել կրոնական ճշմարտություններ, գ) աշակերտների հոգևոր կյանքի զարգացում⁴, դ) խթանել և զարգացնել աշակերտների կրոնական-բարոյական զգացմունքներն ու մտապատկերները⁵, ե) մեկնաբանել աստվածաշնչային այն օրենքները, որոնց համաձայն մարդը ապրում է⁶, զ) ճանաչել և արժևորել սեփական կրոնական դիմագիծը և հաղորդակից լինել կրոնական կյանքի մշակույթին⁷, է) կրթել քրիստոնյա անձնավորություն,

րակութեան մէջ. թէ՛ ինչ եղանակաւ և ի՞նչ տեսրակների վերայ է ասանդվում մարդկային կենաց այս կարևոր ուսմունքը մեր դպրոցներումը, և թէ՛ ինչպէս պէտք է ասանդուէր, «Կռունկ հայոց աշխարհի» Հանդէս Ամսօրեայ, Թիֆլիս, 1863, N 10, էջ 772:

¹ Տե՛ս **Բահաթրեանց Ա.**, Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ, «Մանկավարժական թերթ» ամսագիր, Թիֆլիս, 1878, N 2, էջ 36

² Տե՛ս Խմբագրական, Կրօնի դասը, «Սիոն», Երուսաղեմ, 1932, N 2, էջ 36:

³ Նոյն տեղում, էջ 36:

⁴ Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կտակարանի պատմաձևների համակերպութեամբ, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 9-10, էջ 313-314:

⁵ Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, Կրօնի ուսուցումն, «Արարատ» հանդէս, Սբ. Էջմիածին, 1889, N 2, էջ 337:

⁶ Տե՛ս **Սահակ Վարդապետ**, Կրօնագիտութեան կարեւորութիւն եւ Կրօնուսուցիչք, «Արարատ» հանդէս, Սբ. Էջմիածին, 1881, N Ժ, էջ 539:

⁷ Տե՛ս Խմբագրական, Կրօնական դաստիարակութիւն, «Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, 1930, N 7, էջ 35:

ծանոթացնել նրան սեփական հասարակական պարտականություններին՝ քրիստոնեական հասարակության մեջ¹, ը) ծանոթացնել քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքներին և դավանությանը, ազատվել սնոտիապաշտություններից²:

Վերոնշյալ խնդիրների լուծումները ներկայացվել են կրոնի ուսումնական ծրագրերում՝ դրանց համարժեք նյութերի մշակմամբ: Առհասարակ, կրոնի ուսումնական ծրագրերի առնչությամբ հողվածներից և ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ հիմնական աղբյուրը եղել է Աստվածաշունչը: Ծրագրերում ներառված են եղել Հին Կտակարանից՝ «Նախապատմական», «Նահապետների», «Դատավորների», «Թագավորների» դարաշրջանները ներկայացնող նյութեր, իսկ Նոր Կտակարանից՝ քրիստոնեական բարոյագիտության հիմնադիր՝ Հիսուս Քրիստոսի կյանքն ու գործունեությունը լուսաբանող նյութեր³:

Համաձայն Իսահակ Հարությունյանի կրոնի ուսումնական ծրագիրն անհրաժեշտ է սկսել «Սրբազան պատմությամբ»՝ նկարագրողական, կրոնաբարոյական մտքերով հարուստ լինելու, պատանիների՝ կանոնավոր զարգացմանը համապատասխան սկզբունքներ ունենալու, քրիստոնեական գաղափարները ընկալելու համար՝ նախապատրաստական բնույթի բովանդակություն պարունակելու պատճառներով⁴: Օրինակ, քրիստոնեական դաստիարակության առաջին աստիճանում նպատակահարմար է «Նահապետների դարաշրջան»-ի պատմությունների դասավանդումը, քանի որ նման պատմությունների միջոցով աշակերտը ծանոթանում է Աստծո և մարդկանց միջև եղած մտերիմ հարաբերություններին և հնարավորություն է ունենում զարգացնել սեփական կրոնաբարոյական զգացմունքները⁵:

Ըստ մեկ այլ հեղինակի՝ Խորեն Ստեփանեի, կրոնի ուսումնական ծրագրերում անհրաժեշտ է ներառել մանուկների կյանքի համար բարո-

¹ Տե՛ս **Երզնկեանց Գ.**, Կրօնագիտութեան դասաւանդումն մեր ուսումնարաններում, «Արարատ» հանդէս, Սբ. Էջմիածին, 1886, N Ը, էջ 353:

² Տե՛ս Կրօնագիտութիւն ազգային դպրոցներում, «Դպրոց» ամսագիր, Վաղարշապատ 1875, N 3, էջ 85:

³ Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, նշվ. աշխ.: Հ. արք. Տեր-Մովսիսյան, Երկերի ժողովածու, «Մեր դպրոցները և նոցա ներքին կազմակերպութիւնը», Էջմիածին, 2009, էջ 587:

⁴ Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, նշվ. աշխ.:

⁵ Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, նշվ. աշխ., էջ 346:

յական կանոններ ներկայացնող նյութեր, որոնք կպարունակեն՝ ա) պատմական փաստեր, որոնք հավատի նյութ են կազմում, բ) բարոյական գրույցներ, որոնցից կարելի է կյանքի դասեր քաղել, գ) Աստվածաշնչի այն հատվածները, որոնք աղոթքների և եկեղեցական երգերի համար աղբյուր են հանդիսանում¹:

Ուշադրության է արժանի տարբեր դասարաններում առարկայի բովանդակության վերաբերյալ Գրիգորիս Երզնկյանցի կարծիքը: Համաձայն նրա՝ ուսումնական ծրագրերում անհրաժեշտ է ներառել՝ ա) հավատի և բարոյականության հիմնական կանոններ, բ) հասարակական աստվածապաշտության այն գլխավոր արարողությունները, որոնց մասնակցում է աշակերտը, գ) քրիստոնեական հավատքի համար հիմք հանդիսացող պատմություններ, աղոթքներ, հոգևոր երգեր, մաղթանքներ ու շարականներ, դ) Հավատո հանգանակ, պատվիրաններ, Սուրբ Պատարագ, ե) Հին և Նոր Կտակարանների համապատասխան բաժիններ²:

Հետաքրքրական է, ներկայացված հոդվածներում աշակերտների տարիքային առանձնահատկությանն առնչվող հարցը: Շատ հեղինակներ շեշտում են, որ կրոն դասավանդելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները³: Այդ առթիվ Իսահակ Հարությունյանցը գրում է.

«Կրօնի ուսուցումը միա առարկաների համեմատությամբ ավելի դժուար է, որովհետև գործ ունի մանկան հոգւոյ վսեմագոյն մասի, դեռևս մեծաւ մասամբ հեռու գտանուող զգացմանց և մտապատկերների հետ»⁴:

Այն մասին թե ինչպիսի մեթոդաբանական լուծումներ են առաջարկել հայ հեղինակները տեղեկանում ենք քննարկվող ամսագրերից՝ «Արարատ»-ի, «Մանկավարժանոց»-ի և «Մուրճ»-ի շնորհիվ: Դրանցում լուսաբանված ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ գոյություն են ունեցել մեթոդաբանական հետևյալ տարբերակները՝ ա) համակենտրո-

¹ Տե՛ս, **Խ. Ստեփանե**, Կրօնի պրոգրամի առիթով, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 3, էջ 143:

² Տե՛ս **Երզնկեանց Գ.**, Դասաւանդման խորհուրդներ, «Արարատ» հանդէս, Սբ. Էջմիածին, 1892, N Է, էջ 640-641:

³ Տե՛ս **Երզնկեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 392: Սահակ վարդապետ., Մանուկների կրօնական կեանքը, «Արարատ» հանդէս, Սբ. Էջմիածին, 1882, N Դ, էջ 124:

⁴ Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, նշվ. աշխ., էջ 337:

նական¹ բ) հինգ աստիճան², գ) առաջընթաց և համանվագ եղանակներ³, դ) միասնական եղանակ⁴:

Համաձայն Խորեն Ստեփանեի՝ հայ կրթական միջավայրում կրոնի ուսումնական ծրագրի մեթոդաբանությունը դեռևս անորոշ է, իսկ ուսումնական ծրագիրը հիմնված է «*առաջընթաց եղանակի*» վրա, որը կրոնի դասավանդման ձևերից է և տարածված է եղել քննարկվող ժամանակաշրջանում: Հեղինակը այդ եղանակի մասին հաղորդում է հետևյալը.

«Առաջընթացօղական եղանակով նախ ուսումնասիրվում է հին կտակարանը, յետոյ նոր կտակարանը և վերջը վարդապետարանը»⁵:

Քննարկվող հոդվածներում «*համանվագ եղանակ*»-ի մասին տեղեկությունները սակավ են, քանի որ համաձայն Խորեն Ստեփանեի, դասավանդման այս ձևը գործածական չի եղել դպրոցներում: Համապատասխան այդ եղանակի կրոնի բոլոր բաժինները միաժամանակ են ուսումնասիրվում⁶:

Հաշվի առնելով հայկական դպրոցների առանձնահատկությունները⁷, ինչպես նաև համընդհանուր կրոնի ուսումնական ծրագրերի բացակայությունը, Խորեն Ստեփանեն հարկ է համարել կազմել առարկաների համակենտրոնական ծրագրեր, որոնք կիրառելի կլինեին հոգևոր ծխա-

¹ Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կրոնի դասատուութեան համակերթօնական սիստեմ, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս 1884, N 7-8, էջ 244:

² Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, նշվ. աշխ., «Արարատ» հանդես, Սբ. Էջմիածին, 1889, N է, էջ 405: **Հ. Տեր-Միրաքյան**, Մանկավարժական խորհրդածություններ, «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, Թիֆլիս, 1889, N 3, էջ 444:

³ Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կրոնի դասատուութեան առաջընթաց և համանուագ եղանակներ, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 4, էջ 200:

⁴ Տե՛ս **Երզնկեանց Գ.**, Դասաւանդման խորհուրդներ, «Արարատ» հանդես, Ս. Էջմիածին, 1892, N է, էջ 644:

⁵ Տե՛ս **Խ. Ստեփանե**, նշվ. աշխ., էջ 200:

⁶ Նույն տեղում, էջ 205:

⁷ Քննարկվող ամսագրերում նշվում է, որ հայկական դպրոցներում գոյություն ունեին տարբեր դասընթացներ՝ երկամյա, եռամյա, քառամյա, ինչի հետևանքով աշակերտները ստանում էին ոչ ամբողջական գիտելիքներ կրոնից: Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կրոնի դասատուութեան համակերթօնական սիստեմ, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 7-8, էջ 240:

կան, հոգևոր միջնակարգ դպրոցներում¹: Սույն ծրագրերի շարքում իր ուրույն տեղն է ունեցել կրոնի «*համակենտրոնական պրոգրամ*»-ը:

«*Համակենտրոնացում*» հասկացությունը՝ յուրաքանչյուր տարվա ուսումնական նյութերի բովանդակության ընդարձակումն է նորանոր մանրամասնություններով², ինչից հետևում է, որ կրոնի ուսումնական նյութերը ամեն տարվա համար կրկնվում են, սակայն ավելի ընդարձակ բովանդակությամբ և մեկնաբանությամբ: Տվյալ մեթոդի նպատակն է կրոնի ուսուցումը ամբողջության մեջ ներկայացնել: Օրինակ, «Սրբազան պատմության» բաժինները յուրաքանչյուր տարվա համար առանձնացնելու փոխարեն, դրանցից ընտրել և մշակել ընդհանուր կրոնի ուսումնական դասընթացներ ներկայացնող ուսումնական ծրագրեր, որոնք առաջնային նշանակություն ունեն քրիստոնյայի համար³: Տվյալ մեթոդաբանությամբ առաջնորդվելու արդյունքում, յուրաքանչյուր աշակերտ անկախ դպրոցը ավարտելու տարիքից, կարող էր ստանալ ամբողջական գիտելիքներ կրոնից⁴:

Համաձայն «*միասնական եղանակ*» դասավանդման ձևի, բոլոր կրոնական փաստերը փոխկապակցված են միմյանց և ի հայտ են գալիս՝ որպես մեկը մյուսի հետևանք: Օրինակ՝ Ավետման պատմությունը ներկայացնելիս զուգահեռ անդրադառնում են Աստվածամոր աղոթքին, կամ Հիսուս Քրիստոսի կյանքին անդրադառնալիս ներկայացնում են Սուրբ Պատարագի խորհուրդը⁵:

Քննարկվող ժամանակաշրջանում կրոնի դասավանդման մեթոդի տարբերակներից է «հինգ աստիճաններ»-ը, որը հայտնի է հետևյալ անուններով՝ ա) նախապատրաստություն կամ վերլուծություն, բ) հանդիմանարարություն (սինթեզ), գ) զուգորդություն (ասոցիացիա), դ) համա-

¹ Տե՛ս **Խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանե**, Համակենտրոնական պրոգրամներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դաստիարակների հրահանգներով հայկական հոգևոր ծխական և միջնակարգ դպրոցների համար, Թիֆլիս, 1883, էջ 2:

² Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կտակարանի պատմաձևերի համակենտրոնացում, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 9-10, էջ 311:

³ Տե՛ս **Խ. Ստեփանե**, Կրօնի դասատուութեան համակենտրոնական սիստեմ, «Մանկավարժանոց» մանկավարժական ամսագիր, Թիֆլիս, 1884, N 7-8, 244:

⁴ Նույն տեղում, էջ 247:

⁵ Տե՛ս **Երզնկեանց Գ.**, Դասավանդման խորհուրդներ, «Արարատ» հանդես, Սբ. Էջմիածին, 1892, N Է, էջ 645:

կարգություն (սիստեմ), ե) գործադրություն¹: Տվյալ հինգ աստիճաններից յուրաքանչյուրն ունի իր նպատակը: Առաջին աստիճանի նպատակն է աշակերտներին նախապատրաստել նոր նյութը ընկալելուն: Ուսուցիչը հարցումների միջոցով կրկնում է նախորդ դասը և անցնում նոր դասի մեկնաբանությանը: Երկրորդ աստիճանի ժամանակ ուսումնական նյութը ներկայացվում է մի քանի տեսանկյունից՝ պատմական, կրոնաբարոյական և աշխարհագրական: Երկրորդ աստիճանի գլխավոր նպատակն է, ինչպես հեղինակն է նշում. «... այս մեթոդի միջոցով է, որ մեզ հնարատր կը լինի աշակերտներին առաջնորդել կտակարանական, պատմական, բնապատմական և այլն նիւթեր պարունակող գրքերից անմիջապես օգուտ քաղել և այսպիսով կեանքում ինքնուրոյն կերպով յառաջ գնալու հմտութիւնը նրանց հետզհետէ ձեռք բերել տալ²»:

Երրորդ աստիճանի ժամանակ դուրս է բերվում դասի ընդհանուր գաղափարը, իսկ չորրորդի դեպքում ներկայացվում դասի գաղափարին համապատասխան աստվածաշնչային համարը³: Հետաքրքրական է մեթոդի վերջին՝ հինգերորդ աստիճանը, որի նպատակն է աշակերտին սովորեցնել գործնականում կիրառել դասի ընթացքում ստացած սեփական գիտելիքները: Այս առթիվ Հ. Տեր-Միրաքյանը գրում է. «... աշակերտներին առաջնորդել իրենց ստացած գաղափարներն գործադրել բազմատեսակ դէպքերում և հանգամանքներում, օրինակ՝ թէ ի՞նչպէս պէտք է մի մարդու արարմունքը քննադատել՝ ըստ մեր ուսած բարոյական գաղափարին⁴»:

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում կրոնական կրթություն և դաստիարակություն խորագրերով հոդվածները փաստում են, որ հայ մանկավարժներն ու հոգևոր գործիչները մշտապես իրենց ուշադրության կենտրոնում են պահել կրոնական կրթությանն ու դաստիարակությանն առնչվող խնդիրները: Օրակարգային հարցերից են եղել առարկայի դասավանդման մեթոդաբանության վերանայման, ուսումնական ծրագրերի և դասագրքերի բարելավման հարցերը: Առարկայի առաջադրանքները, դպրոցական համընդհանուր դաստիարակության մի մասն են կազմել,

¹ Տե՛ս Հ. Տեր-Միրաքյան, նշվ. աշխ., էջ 444-445:

² Նույն տեղում, էջ 444:

³ Տե՛ս **Յարութիւնեանց Ի.**, Կրօնի ուսուցումն, «Արարատ» հանդես, Ս. Էջմիածին, 1889, N Է, էջ 408:

⁴ Տե՛ս Հ. Տեր-Միրաքյան, նշվ. աշխ., էջ 445:

որոնց նպատակն է եղել աշակերտին ծանոթացնել իրենց կրոնի պատմությանն ու ընդհանուր մարդկային արժեհամակարգին՝ կրոնի՝ քրիստոնեության միջոցով:

Բանալի բառեր՝ կրոնական կրթություն և դաստիարակություն, քրիստոնեական արժեհամակարգ, մանկավարժական և կրոնական ամսագրեր, հայկական դպրոց, կրոնական կրթության նպատակներ, ուսուցման մեթոդաբանություն, կրոնի դասագրքեր

**ОПЫТ ИССЛЕДОВАНИЙ АРМЯНСКОГО РЕЛИГИОЗНОГО
ОБРАЗОВАНИЯ И ВОСПИТАНИЯ В АРМЯНСКИХ
РЕЛИГИОЗНО-ПЕДАГОГИЧЕСКИХ ЖУРНАЛАХ
(В КОНЦЕ 19-ГО-НАЧАЛА 20-ГО ВВ)**

Мане Гевондян

***Ключевые слова:** религиозное образование и воспитание, христианские ценности, педагогические и религиозные журналы, армянская школа, цель религиозного образования, методы обучения, учебники религии*

В разные времена, особенно начиная с 19 века, во многих странах содержание религиозного образования и воспитания подвергалось изменениям и вводились разные понятия, в зависимости от множества факторов таких как история, религия, конфессия, социально-общественные и образовательные особенности страны.

Религиозное образование и воспитание в Армении имело особую и важную роль с момента принятия христианства. В данной статье обсуждены вопросы, связанные с этой сферой в армянских школах в конце 19-го-начала 20-го вв.. Источниками информации для этой цели послужили статьи и исследования, опубликованные армянскими педагогами и церковными деятелями в религиозно-педагогических журналах. В статье представлены цель религиозного образования, как школьного предмета в тот или иной исторический период, методы его обучения и использованные учебники.

**RELIGIOUS EDUCATION AND UPBRINGING STUDIES ON ARMENIAN
EXPERIENCES IN ARMENIAN RELIGIOUS AND PEDAGOGICAL
MAGAZINES (THE LATE 19TH TO THE EARLY 20TH CENTURIES)**

Mane Ghevondyan

Keywords: *Religious education and upbringing, Christian values, pedagogical and religious journals, Armenian school, the aims of religious education, teaching methods, textbooks of religion*

During various periods of time, especially since 19th century, many countries, have introduced different content under religious education because of the influence of the following circumstances: history, religion, denomination, social, public, educational features. Religious education and upbringing have played a special role in Armenian reality since the adoption of Christianity. In this article, we have addressed the issues related to religious education and upbringing in Armenian schools from the late 19th to the early 20th centuries. As a sources for this data articles and studies published by Armenian pedagogues and religious figures are used. The aims of religious education as a school subject in the particular period of time and some teaching methods and the issue of the textbooks are presented and discussed in the article as well.